

Հավելված

Ծաղկասար համայնքի ավագանու 2016թ-ի
դեկտեմբերի 15 -ի թիվ 10 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով
գործող ՀՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հ. Աբաջյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 15.12.2016 թ. թիվ 10 որոշմամբ

ԾԱՂԿԱՍԱՐ 2017
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն-----	3
2.Համայնքի իրավիճակի նկարագրություն-----	4
2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն-----	4
2.2.Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը-----	5
2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը-----	6
2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները-----	7
2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ-----	7
2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն-----	8
3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում-----	9
3.1.Համայնքի զարգացման տեսլական-----	10
3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ-----	11

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկասար համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ծաղկասար համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են համայնքային ժողովի ժամանակ համայնքային ակտիվ խմբի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը համայնքի աշխատակազմի հետ միասին մշակել են համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀՀԶԾ-ն ներառում է նաև Ծաղկասար համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Ծաղկասար համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ծաղկասարի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիրը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀՀԶԾ-ում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը, ինչպես նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

Սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և սույն ՀՀԶԾ-ի հիմնական նպատակները:

Ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ,

փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

Ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծաղկասար համայնքը գտնվում է Թալինի տարածաշրջանում. նախկին շրջկենտրոնից 17կմ հյուսիս: Հեռավորությունը մարզկենտրոնից 60. մայրաքաղաքից՝ 80 կմ. է: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 2050 մետր է:

Համայնքը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է: Այն պատմական Այրարատ նահանգի Արագածոտն գավառի Մազդարա բնակավայրի տարածքում է: Գյուղի տարածքում պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ, որոնք պատմագիտական և հնագիտական մեծ արժեք են ներկայացնում:

Ծաղկասարի բնակչության նախնիները գաղթել են 1905 և 1918 -ական թվականներին՝ Արևմտյան Հայաստանից, հիմնականում՝ Ալաշկերտից և Մուշից:

Համայնքի բնակիչների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Սակայն ճյուղի արդյունավետությունը բավականին ցածր է:

Վերջին 10 տարում համայնքի հիմնականում երիտասարդ բանակիչները մեկնում են արտագնա աշխատանքի:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են, հիմնականում ցամաքային և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը չափավոր ցուրտ է: Ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Գարունը ուշ է բացվում, աշունը շուտ վերջանում: Ձնածածկույթը տարածքում տևական է լինում, ուղեկցվում է բքի վերածվող ուժեղ քամիներով: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 400-450մմ-ի սահմաններում: Տարածքը քարքարոտ է, կան շատ բլուրներ, ձորեր, ձորակներ, լեռներ և անհարթ տարածություններ: Համայնքն ունի 475հա հողատարածք, այդ

թվում վարելահող 229հա, արոտավայրեր – 235 հա, պետական պահուստի հողեր – 40հա, սեփականաշնորհված հողեր – 150 հա, տնամերձեր – 9. հա

Հողի սեփականատերեր են համարվում 33 ընտանիքներ,

Սեփականաշնորհված մեկ հողամասի չափը 4.0 հեկտար է:

Համայնքում պահվում են 157 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից կովեր են 90-ը: Տնտեսություններում կան 150 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 20 գլուխ խոզեր ,300 թև թռչուններ և 15 մեղվաընտանիքներ:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքում բնակվում է 98 բնակիչ, այդ թվում տղամարդիկ՝ 54, կանայք՝ 44: Ծխերի թիվը 33 է: Համայնքում աշխատունակ բնակչության թիվը կազմում է 48 մարդ, կան ամբողջ բնակչության 49 %-ը: Նրանցից մշտական աշխատանքով ապահովված է 12-ը: Դպրոցականների թիվը 11-ն է, թոշակառուների թիվը 10:

Վերջին 10 տարում համայնքի հիմնականում երիտասարդ բանակիչները մեկնում են արտագնա աշխատանքի:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

0-4 տարեկան – 2 մարդ

5-7 տարեկան – 4 մարդ

8-15 տարեկան – 7 մարդ

16-62 տարեկան – 75 մարդ

63 և ավելի տարեկան- 10 մարդ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝

- աշխատունակ բնակչություն – 75 մարդ
- նպաստառուներ – 1 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 10 ,
- տնային տնտեսությունների թիվը – 38
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 8 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 1:

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 4456.4հազ. դրամ է, որի մեջ սեփական եկամուտների բաժինը 18% -ի սահմաններում է:

Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն և գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն , հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն, քանի որ ռոտզման ջրի բացակայության պատճառով հացահատիկի բերքատվությունը շատ ցածր է և ոչ երաշխավորված, անասնակերը գնովի ,որի արդյունքում

ստացվում է բարձր ինքնարժեքով գյուղատնտեսական արտադրանք ,որի ծավալները տնտեսապես շահավետ չէ ավելացնել: Ծաղկասար համայնքի հողատեսքերի դիրքադրությունը բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության և անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Ծաղկասար համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ : Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով , վերամշակման տեխնոլոգիաների ու ռոտզման ջրի բացակայությամբ:

Ծաղկասար համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով: Ծաղկասար համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 4 հոգուց: Համայնքապետարանը չունի վարչական շենք, ժամանակավորապես գտնվում է դպրոցի շենքում ,աշխատակազմի համար պայմանները բավարար են, կահավորանքը մասամբ թարմացվել է: Համայնքապետարանը մասնակի հազեցած է տեխնիկայով,սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեության համար

Համապատասխան մասնագետ ուսուցիչների բացակայության պատճառով գյուղում դպրոց չկա, երեխաները սովորում են Մաստարայի միջնակարգ դպրոցում : Գյուղին սպասարկում է Մաստարայի ամբուլատորիան

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Ծաղկասար համայնքում գալիք 2017-2021 թթ. ընթացքում նախատեսվում է համագործակցել պետության և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- հիմնական վերանորոգման ենթարկել համայնքապետարանի շենքը, աշխատողների համար ստեղծել նորմալ պայմաններ
- Վերանորոգել համայնքի գերեզմանոցի ցանկապատը
- Փողոցների լուսավորության անցկացում
- Մշակույթի տան հիմնանորոգում
- Գյուղատնտեսական կոպերատիվի ստեղծում գյուղտեխնիկայի ձեռք բերում
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում

- Հակակարկտային կայաններ ձեռք բերում
- Բարձրացնել գյուղտնտեսության շահութաբերությունը: Համայնքում ստեղծել սանիտարական նորմալ պայմաններ:
- Համայնքում աշխուժացնել մարզական և մշակութային կյանքը, բարելավել բնակչության բուժապասարկումը
- Համայնքում աշխուժացնել մարզական և մշակութային կյանքը, բարելավել բնակչության բուժապասարկումը

2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են վարչական և ֆոնդային բյուջեների միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին ակնկալվում է կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են հարկերի, տուրքերի և ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին: Սեփական եկամուտները 2016 թ. կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 18 %-ը, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ 82 %-ը: Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ում: Այդ ծրագրերի իրականացումը դուրս է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցության ապահովման համար:

Ծրագիր 1. 2017-2021թթ ընթացքում հիմնական վերանորոգման ենթարկել համայնքապետարանի շենքը, աշխատողների համար ստեղծել նորմալ պայմաններ

- Կազմել համայնքապետարանի շենքի վերանորոգման նախահաշվա- նախագծային փաստաթղթեր:

Ժամկետ – մինչև 2018 թ. մարտ

Պատասխանատու – համայնքապետ

- Համայնքի բյուջեում շենքի վերանորոգման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2019 թ. դեկտեմբեր

Պատասխանատու – ավագանի, գլխ. հաշվապահ

- Պայմանագիր կնքել շինարարական կազմակերպությունների հետ:

Ժամկետ – մինչև 2020 թ. մարտ

Պատասխանատու – համայնքապետ

- Սկսել շենքի վերանորոգումը:

Ժամկետ –2020թ. մայիս

Պատասխանատու – համայնքապետ

- Ավարտել շենքի վերանորոգումը:

Ժամկետ –2020 թ. հոկտեմբեր

Պատասխանատու – համայնքապետ

- Ջեռք բերել նոր գույք և սարքավորումներ, կահավորել համայնքապետարանը:

Ժամկետ –2020 թ. դեկտեմբեր

Պատասխանատու – համայնքապետ, գլխ. հաշվապահ

- Ներկայացնել կատարված աշխատանքների մասին մանրամասն հաշվետվություն:

Ժամկետ –2020 թ. դեկտեմբեր

Պատասխանատու – համայնքապետ, գլխ. հաշվապահ

Ծրագիր 2. Վերանորոգել համայնքի գերեզմանոցի ցանկապատը

- Համայնքի բյուջեում վերանորոգման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2017 թ. հունվար

Պատասխանատու –ավագանի, գլխ. հաշվապահ

- Կազմել աշխատանքների նախահաշիվ

Ժամկետ – մինչև 2017 թ. մարտ

Պատասխանատու –ավագանի, համայնքի ղեկավար

- Շինարարությունն սկսել 2017 թ. մայիսին և ավարտել 2017թ. հոկտեմբերին:

Ժամկետ – մինչև 2017 թ. հոկտեմբեր

Պատասխանատու –համայնքապետ

- Հետևել պարսպի և ցանկապատի պահպանմանը:

Պատասխանատու –համայնքապետ

Ծրագիր 3 Փողոցների լուսավորության անցկացում

- Համայնքի բյուջեում վերանորոգման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2018 թ. հունվար

Պատասխանատու –ավագանի, գլխ. հաշվապահ

- Կազմել աշխատանքների նախահաշիվ և ներկայացնել ՎՈՐԼԴ ՎԻԺՆ միջազգային բարեգործական կազմակերպությանը :

Պատասխանատու –ավագանի, համայնքապետ

Ժամկետ – մինչև 2018 թ. մարտ

- Համայնքի կողմից ապահովել շինմոնտաժային աշխատանքների նախագծային արժեքի 10 %-ի չափով ներդրում:

- Ժամկետ – մինչև 2018 թ. մարտ

- Պատասխանատու –ավագանի, համայնքապետ

- Շինարարությունն սկսել 2018 թ. մայիսին և ավարտել 2018թ հոկտեմբերին

Ժամկետ – մինչև 2018 թ. հոկտեմբեր

Պատասխանատու –համայնքապետ

Ծրագիր 4 Մշակույթի տան հիմնաևորոգում

- Համայնքի բյուջեում վերանորոգման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2020 թ. հունվար

Պատասխանատու –ավագանի, գլխ. հաշվապահ

- Կազմել աշխատանքների նախահաշիվ ներկայացնել ՀՀ կառավարություն

Ժամկետ – մինչև 2020 թ. մարտ

Պատասխանատու համայնքի ավագանի և համայնքապետ

- Համայնքի կողմից ապահովել շինմոնտաժային աշխատանքների նախագծային արժեքի 10 %-ի չափով ներդրում:

Ժամկետ – մինչև 2020 թ. մարտ

Պատասխանատու –ավագանի, համայնքապետ

- Շինարարությունն սկսել 2020 թ. մայիսին և ավարտել 2021թ. հոկտեմբերին:

Ժամկետ – մինչև 2021 թ. հոկտեմբեր

Պատասխանատու –համայնքապետ

Ծրագիր 5 Գյուղատնտեսական կոպերատիվի ստեղծում գյուղտեխնիկայի ձեռք բերում

- Համայնքի բյուջեում ձեռք բերման համար հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2018 թ. հունվար

Պատասխանատու –ավագանի, գլխ. հաշվապահ

- Դիմել Գյուղատնտեսության զարգացման մարզային գործակալություն /ՕԻԳ/

Ժամկետ – մինչև 2018 թ. փետրվար

Պատասխանատու –համայնքապետ

- Համայնքում ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվ

Ժամկետ – մինչև 2018 թ. Մարտ

Պատասխանատու կոպերատիվի նախագահ, համայնքապետ

- Օժանդակել կոպերատիվի աշխատանքներին

Պատասխանատու – համայնքապետ

Ծրագիր 6 Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում

- Համայնքի բյուջեում հատկացնել անհրաժեշտ գումարներ:

Ժամկետ – մինչև 2017թ. հունվար

Պատասխանատու – ավագանի, գլխ. հաշվապահ

- Կազմել , նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Ժամկետ – մինչև 2017 թ. ապրիլ

Պատասխանատու – համայնքապետ, գլխ. հաշվապահ

- Շինարարությունն սկսել 2017 թ. մայիսին և ավարտել 2018 թ. հոկտեմբերին:

Ժամկետ – մինչև 2018թ. հոկտեմբեր

Պատասխանատու – ավագանի, համայնքապետ

Ծրագիր 7 Հակակարկտային կայաններ ձեռք բերում

- Համայնքի բյուջեում հատկացնել անհրաժեշտ գումարներ.ապահովել 10տոկոս ներդրում

Ժամկետ – մինչև 2017թ. հունվար

Պատասխանատու –ավագանի, գլխ. հաշվապահ

- Դիմել Գյուղատնտեսության զարգացման մարզային գործակալություն /ՕԻԳ/

Ժամկետ – մինչև 2017 թ. փետրվար

Պատասխանատու –համայնքապետ

- Հետևել կայանների աշխատանքին

Պատասխանատու –համայնքապետ

Ծրագիր 8. Բարձրացնել գյուղտնտեսության շահութաբերությունը:

- Ուսումնասիրել սերմերի, պարարտանյութերի նկատմամբ համայնքի պահանջը
Պատասխանատու ` համայնքապետ
Ժամկետ` ամեն տարի, փետրվարին
- Յուրաքանչյուր տարվա փետրվարին մարզպետարան ներկայացնել սերմերի և պարարտանյութի պահանջարկի հայտ,
Պատասխանատու ` համայնքապետ
Ժամկետ` ամեն տարի, մինչև ապրիլ
- Կապեր հաստատել հանրապետությունում պարարտանյութ և սերմեր ներկրող և արտադրող կազմակերպությունների և անհատների հետ, տալ նախնական պատվերներ,
Պատասխանատու ` համայնքապետի
Ժամկետ` ամեն տարի, մինչև ապրիլ
- Պայմանավորվել գյուղտեխնիկա ունեցող անձանց հետ աշխատանքի ծավալի, ժամկետների և վարձատրության կարգի մասին,
Պատասխանատու ` համայնքապետի
Ժամկետ` ամեն տարի, մինչև ապրիլ
- Ապահովել պարարտանյութի և սերմացուի ներկրումն ու բաժանումը բնակչությանը,
Պատասխանատու ` համայնքապետ

Ժամկետ՝ ամեն տարի, մինչև ապրիլ

- Պայմանագիր կնքել մթերող կազմակերպությունների և անհատների հետ՝ կենտրոնացված կարգով գյուղատնտեսական արտադրանքի մթերումներ իրականացնելու համար: Հետևել պայմանագրերի կատարման ընթացքին

Պատասխանատու՝ գյուղապետ

Ժամկետ՝ տարվա ընթացքում

Ծրագիր 9. Համայնքում ստեղծել սանիտարական նորմալ պայմաններ:

- Յուրաքանչյուր տարի մարտ և հոկտեմբեր ամիսներին համայնքում կազմակերպել սանիտարական մաքրման տասնօրյակներ,

Պատասխանատու՝ համայնքապետ

Ժամկետ՝ ամեն տարի

- Կազմել շաբաթօրյակների գրաֆիկ, նախահաշիվ, ներկայացնել համայնքի ներկայացուցիչներին և ավագանուն,

Պատասխանատու՝ համայնքապետ, գլխ. հաշվապահ

Ժամկետ՝ ամեն տարի, մարտ

- Ճշտել անհրաժեշտ մեքենասարքավորումների քանակը և պահանջվող վառելիքի ծախսը: Վառելիքը ձեռք բերել համայնքի բնակիչների և գյուղապետարանի միջոցներով,

Պատասխանատու՝ համայնքապետ, գլխ. հաշվապահ

Ժամկետ՝ ամեն տարի, մարտ

- Կառուցել պարզ տիպի աղբանոց և ամիսը մեկ անգամ կազմակերպել աղբահանություն համայնքի ուժերով:

Պատասխանատու՝ համայնքապետ, գլխ. հաշվապահ

Ժամկետ՝ ամեն տարի

Ժամկետ՝ ամեն տարի, փետրվար

Ծրագիր 10. Համայնքում աշխուժացնել մարզական և մշակութային կյանքը, բարելավել բնակչության բուժսպասարկումը

- Յուրաքանչյուր տարի փետրվար ամսին լսել տարվա ընթացքում համայնքում իրականացվող մարզական, առողջարարական և մշակութային ծրագրերի մասին պատասխանատու անձանց հաղորդումները և հաստատել դրանք:

Պատասխանատու՝ ավագանի, համայնքապետ

Ժամկետ՝ ամեն տարի, փետրվար

- Հետևել մարզական, առողջարարական և մշակութային բնագավառներում իրականացվող աշխատանքների ընթացքին:

Պատասխանատու – համայնքապետի օգնական

Ժամկետ՝ ամեն տարի, մարտ

- Կազմակերպել համահամայնքային առողջարարական, մշակութային և մարզական միջոցառումներ: Այդ նպատակի համար համայնքապետարանի միջոցներից հատկացնել անհրաժեշտ գումարներ

Պատասխանատու – Մշակույթի տան և գրադարանի տնօրինություն

Ժամկետ՝ ամեն տարի, պարբերաբար

- Մասնակցել մարզում և հանրապետությունում կազմակերպվող մարզական և մշակութային միջոցառումներին: Գյուղում ամբողջապես կատարել առողջարարական հանրապետական և մարզական կազմակերպությունների կողմից կազմված զանգվածային միջոցառումների ծրագիրը:

Պատասխանատու – Ստորաբաժանումների պատասխանատուներ

Ժամկետ՝ ամեն տարի, պարբերաբար

- Խրախուսել մարզական և մշակութային միջոցառումներին լավագույն ձևով մասնակցած համայնքի բնակիչներին և մարզիկներին

Պատասխանատու – համայնքապետ

Ժամկետ՝ ամեն տարի, դեկտեմբեր

ԶԱՐԳԱՑՆԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման համար հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են՝

-համայնքի ֆինանսական միջոցների սղությունը

-գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար վիճակը կամ բացակայությունը

-ներհամայնքային ճանապարհների անբավարար վիճակը:

Վերը նշվածի արդյունքում հանայնքում բարձր է գործազրկության և արտագաղթի մակարդակը:

2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքում հողատարածքների մեծ քանակը, պահուստային հողերի առկայությունը:
- Էկոլոգիապես մաքուր բնություն և շրջակա միջավայր,
- Անասնաբուծությունը զարգացնելու հնարավորություններ,,
- Գյուղմթերքների վերամշակման արտադրության կազմակերպման հնարավորությունները,
- Կոոպերացիայի մեծ հնարավորությունները,

Համայնքի թույլ կողմերը և վտանգները

- Համայնքի աշխարհագրական դիրքը
- Մշակութային օբյեկտի ոչ բարվոք վիճակը:
- Ճանապարհների անմխիթար վիճակը:
- Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները:
- Ցրտահարություններ, կարկուտ:
- Համայնքապետարանի ֆինանսական ոչ բավարար միջոցներ:
- Բնակչության սոցիալ-տնտեսական ոչ բարվոք պայմաններ:
- Բնակչության արտահոսք և գործազրկություն:

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Գյուղատնտեսության զարգացումը և դրա հիման վրա գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝
- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, երաշտ, կարկուտ)
- Գործազրկության մակարդակի աճը
- Արտագաղթը

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ծաղկասարը բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է, որտեղ զարգացած են միջազգային տուրիզմն ու էկոտուրիզմը, և որտեղ ստեղծված է

ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման արդյունավետ քաղաքականություն
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր
- Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և գործարարների սերտ համագործակցությունը:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1. Հիմնական վերանորոգման ենթարկել համայնքապետարանի շենքը, կահավորել, աշխատողների համար ստեղծել նորմալ պայմաններ,
2. Գյուղտեխնիկայի ձեռք բերում
3. Գերազանատան ցանկապատի վերնորոգում
4. Կենտրոնական փողոցների լուսավորության անցկացում
5. Մշակույթի տան հիմնանորոգում
6. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերնորոգում
7. Հակակարկտային կայանների ձեռք բերում,
8. Բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը,
9. Ապահովել գյուղատնտեսական մթերքների իրացումը,
10. Բարելավել բնակչության բուժապասարկումը և ակտիվ հանգիստը

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն
- Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և հետագա զարգացման անհրաժեշտություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԲԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԲԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԲԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԲԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԲԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԲԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԲԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում: